ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո.Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> << Մայիսի >> 2020թ. N ՄՊ/3.95-2020

Ք. Արմավիր

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՅԱԿԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 29-ի N649-Ա հրամանը և 2020 թվականի մարտի 27-ի ՆՍՊ/20.2/8615-2020 և հուլիսի 27-ի ՆՍՊ/20.1/20952-2020 հանձնարարականները, 2020 թվականի առաջին եռամսյակից երկրորդ եռամսյակ տեղափոխված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքում և երկրորդ եռամսյակում ընդգրկված համայնքներում իրավական հսկողության աշխատանքները վերսկսելու նպատակով.

որոշում եմ՝

1. Հաստատել 2020 թվականի առաջին եռամսյակից երկրորդ եռամսյակ տեղափոխված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքում և երկրորդ եռամսյակում ընդգրկված համայնքներում իրականացվելիք իրավական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը, իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն NN 1-2 հավելվածների:
2. Իրավական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N03-Ն հրամանով և 2020 թվականի ապրիլի 17-ի ՆՍՊ/20.1/10461-2020 հանձնարարականով ներկայացված՝ տեղական

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվող իրավական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կարեն Գրիգորյանին:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կարեն Գրիգորյանին՝ աշխատանքային խմբերի կողմից ներկայացված իրավական հսկողության արդյունքներն ամփոփելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել 2020 թվականի առաջին եռամսյակում ընդգրկված Արմավիր համայնքում և երկրորդ եռամսյակում ընդգրկված համայնքներում իրականացված իրավական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Հայաստանի Հարապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյանին)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

22.09.2020

X

VERIFIED OCSP 22.09.2020 12:21:40 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2020 թվականի սեպտեմբերի 22 -ի
N ՄՈ/395 -2020 որոշման

2020 թվականի երկրորդ եռամսյակում ընդգրկված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական հսկողության բնագավառը, իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանում*	*Իրականացվելիք իրավական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք իրավական հսկողության բնագավառ*	*Իրավական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1.	Նորապատ համայնք	5 աշխատանքային օր	1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ 2. Քաղաքաշինության բնագավառ 3. Հողօգտագործման բնագավառ	Աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար	Ա. Սարգսյան
2.	Մեծամոր համայնք	5 աշխատանքային օր		Աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ	Գ. Հովհաննիսյան
3.	Արտիմետ համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի	

4.	Տանձուտ համայնք	5 աշխատանքային օր	4. Առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառ	մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ	Ս. Սարգսյան
5.	Լեռնամերձ համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ	Ա. Պողոսյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ	Ա. Ղորղանյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ	Տ. Սարգսյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 22.09.2020 10:25:16 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2020 թվականի սեպտեմբերի 22 -ի
N ՄՈ/395-2020 որոշման

2020 թվականի առաջին եռամսյակից երկրորդ եռամսյակ տեղափոխված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքում և երկրորդ եռամսյակում ընդգրկված համայնքներում իրականացվելիք իրավական հսկողության բնագավառը և իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանում*	*Իրականացվելիք իրավական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք իրավական հսկողության բնագավառ*	*Իրավական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1.	Արմավիր համայնք	5 աշխատանքային օր	1. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ 2. Քաղաքաշինության բնագավառ 3. Հողօգտագործման բնագավառ	Աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ.	Գ. Գևորգյան
2.	Ջանֆիդա համայնք	5 աշխատանքային օր		Աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ	Ռ. Երվանդյան
3.	Խանջյան համայնք	5 աշխատանքային օր		Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար	Ա. Մուրադյան
4.	Տալվորիկ համայնք	5 աշխատանքային օր			

5.	Ծաղկալանջ համայնք	5 աշխատանքային օր	4. Առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ	Ա. Դարբինյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ	Ա. Դանիելյան
				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալ ապահովության վարչության գլխավոր մասնագետ	Ա. Բեգլարյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 22.09.2020 10:26:59 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023